**Համաձայնագիր-1**
**25.10.19թ. կնքված N ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/8-Լ) ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

**ք. Երևան** **«13» դեկտեմբերի 2019 թ.**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Փայլք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Խանաղյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով և հիմք ընդունելով 25.10.2019թ. կնքված N ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/8-Լ) գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1 Պայմանագրով Հավելված 1-ը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, հաստատել նոր խմբագրությամբ /կցվում է/:

1.2 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ծառայության մատուցման ժամկետը (վերջնաժամկետը) երկարաձգել՝ այն սահմանելով մինչև 2020 թվականի հունվարի 14-ը:

1.3 Պայմանագրով սահմանված դրույթները տարածվում են հոկտեմբերի 25-ից ծագած հարաբերությունների վրա:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «Փայլք» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ. Խորենացու-3,7 | ՀՀ, Լոռու մարզ, ք. Տաշիր, Գրիբոյեդովի 14 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011054013 | Հ/Հ 220143330235000 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 06948686 |
| ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| **Է. Գևորգյան** | **Հ. Խանաղյան** |
| (ստորագրություն) | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«13» դեկտեմբերի 2019 թ. կնքված*
*ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/8-Լ) ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

<table>
<tr><th colspan="8">Ծառայության</th></tr>
<tr><th rowspan="2">Հ/Հ</th><th rowspan="2">գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)</th><th rowspan="2">տեխնիկական բնութագիրը</th><th rowspan="2">չափման միավորը</th><th rowspan="2">ընդհանուր գինը/ՀՀ դրամ</th><th rowspan="2">ընդհանուր քանակը</th><th colspan="2">մատուցման</th></tr>
<tr><th>հասցեն</th><th>ժամկետը**</th></tr>
<tr><td>1</td><td>Բնակտարածությունների մաքրման ծառայություններ 90911100/5</td><td>Կատարողը պարտավոր է<br>1.Կատարել տարածքի մաքրում՝ ավլել, ջրել գազոնը հնձել, մայթերը մաքրել:<br>2. Մեքենայացված մաքրում՝ հատուկ ավլող մեքենայի միջոցով, երթևեկելի մասի ամբողջ լայնությամբ աղբը հավաքելով՝ հետագայում ձեռքով կուտակավորելու և տեղափոխելու համար /50.000քմ/:<br>3.Աղբահանության կազմակերպում տարածքից՝ առնվազն 4 անգամ:<br>4. Աղբարկղների տրամադրում /պլաստամսե/, 2 հատ 770 լիտր տարողությամբ աղբամաններ, 10 հատ՝ 110 լիտր տարողությամբ աղբամաններ: Մետաղյա աղբամաններ՝ 10 հատ /նկարը կցվում է/:<br>Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից 1.5-5մ տարածքը: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ նյութերով: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումն իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն:<br>5. Ձյուն գալու դեպքում՝<br>Կատարել ձնմաքրման և ձնահեռացման աշխատանքներ՝ մեքենայացված, ձյունը մաքրելով ամբողջական:<br>Ձյունից մաքրված տարածքներում ավազ և աղ շաղ տալ:<br>6. Վերացնել մայթեզրերի մոլախոտերը թունանյութերի միջոցով, ամիսը մեկ հատուկ նյութերի միջոցով ախտահանել աղբամանները, խնամել խոտածածկը:<br>7. Կատարողը պարտավոր է ծառայությունը մատուցելու համար ունենա հետևյալ սարքավորումները՝</td><td>դրամ</td><td>9 828 000</td><td>1</td><td>Գյումրի քաղաք, Թբիլիսյան խճուղի, թիվ 2/14</td><td>Ծառայության մատուցումն իրականացվում, պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2020 թվականի հունվարի 14-ը:</td></tr>
</table>

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տրակտոր- 2 հատ<br>Աղբատար մեքենա - 2 հատ<br>Փողոցի փոշեկուլ- 2 հատ<br>Ավլող-լվացող մեքենա -2 հատ<br>Ընդհանուր մակերեսը՝ 50 000 քմ.:<br><br>Կատարողը պարտավոր է<br>1.Կատարել տարածքի մաքրում՝ ավլել, մայթերը մաքրել:<br>2.Աղբարկղների ավերադարձ տրամադրում /պլաստամսե/, 2 հատ 770 լիտր տարողությամբ աղբամաններ, 6 հատ՝ 110 լիտր տարողությամբ աղբամաններ և 6 հատ 40 լիտր տարողությամբ աղբամաններ:<br>Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից 2 մ տարածքը: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումն իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն:<br>Ընդհանուր մակերեսը՝ 5 500 քմ.:<br>Ծառայությունը մատուցվելու է 24 օրացույցային օր՝ հոկտեմբերի 25-ից նոյեմբերի 17 ներառյալ: | | | | Գյումրի քաղաք,<br>Մ. Խորենացի 21 | |

*Կատարողը պարտավոր է Մաքրման աշխատանքների այնպիսի կազմակերպում, որ ցանկացած պահի ապահովի տարածքի պատշաճ մաքրությունը և կոմիտեի աշխատակիցների անխափան գործունեությունը:
**Օգտագործվող նյութերը և սարքավորումներն ամբողջությամբ ձեռք են բերվում կատարողի կողմից:
***Մաքրման աշխատանքների կազմակերպման ժամերը նախապես համաձայնեցվում են Պատվիրատուի հետ, ընդ որում կատարողը պարտավոր է ապահովել ցերեկային և գիշերային հերթապահություն:
****Ապահովել կոնտակտային անձի առկայությունը, որը հասանելի լինի յուրաքանչյուր օրացույցային օր՝ շուրջօրյա:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝
**Է. Գևորգյան**
________________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Փայլք» ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, ք. Տաշիր, Գրիբոյեդովի 14
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ
Հ/Հ 220143330235000
ՀՎՀՀ 06948686
Տնօրեն
**Հ. Խանաղյան**
________________
/ստորագրություն/
Կ.Տ